գիպտոս, ինչպէս պիտի վկայէ և մեր պատ-
միչն։ Պատրի ինչ ցեղէ ըլլալն յայտնի
չէ. միայն կ'ըսուի՝ թէ Ասորւոց երկրէն
եկած էր կամ բերուած իբր գերի։

« Ինքն (էմիրն) ամսական տասն ղենար
» (ոսկի դահեկան) կ'առնուր վարձ երկրի
» (վանացն Հայոց), որ իր կալուածն էր։
» Ձեռք զարկաւ և յառաջ տարաւ զվե-
» րաշինութիւն Ս. Յակոբայ սրբարանին
» (արաբ. اسكينا ասքինա, ի յոյն ἄσκηνη
» բառէ). բարձր զմբեթով՝ որ շատ հեռուէն
» կ'երեւէր, կամարօք և կամարակապօք.
» և աւարտեց բոլորը, նորէն հաստատե-
» լով մեծամեծ դռները. ասոնք ատեն մի
» վերցուեցան, բայց ինքն նորէն նորոգեց.
» դարձեալ վերուցին այդ դռները, ինքն
» այլ դարձեալ հաստատեց »։ Հաւանօ-
ւրէն՝ քրիստոնէից և մանաւանդ Հայոց՝ այն
ատենի և տեղւոյ յառաջադիմութեան նա-
խանձոտք և հակառակողք կ'ընէին զայս։

Այս դիպուածոց մանրամասնութենէն
աւելի՝ փափագելի էր մեզ գիտնալ, թէ
ե՞րբ առաջին անգամ շինուեր կամ հիմ-
նուեր էր՝ այդ Երուսաղեմի զուգորդ Հա-
յոց եգիպտական Ս. Յակոբն. որովհետեւ
պատմիչն՝ վերաշինութիւն կամ նորոգու-
թիւն կոչէ Էմիրին ըրածը. որոյ գործակից